



243. ՀԱՅԵԼԻՆ

Մի հըռանչպար մարդ վար անելու ժամանակը, վարի տակից հայելի ա տուս կալիս Թանում ա, մտիկ ա տալիս իրեսին՝ ա՛յ մարդ, տըսնըմ ա ի՞նչ՝ մի ծե՛ր մարդ:

—Ա՛յ, —ասըմ ա, —էդ ի՛ հայրն ա եղել, է՛, էդ արտը վարելուս իրա պատկերն ըստեղ կորցրել ա: Էդ ժամանակ հերս Պաքու ա էլել, երեկի նկարել ա, պերել, ըստե կորցրել ա:

Հայլին վերցնել, պերել դնել զբութը: Կալիս ա տունը, նստում ա: Տրա կնիգը վերցըմ ա, որ մարդի արխալուղը կարի, շյիրից հանկարծ հայլին տուս ա կյալիս: Մտիկ ա տալիս, տըսնըմ ա՝ մի կեղեցիկ կնիգ հայլու միջին:

—Վա՛յ, —ասըմ ա, —փոշշման մեա ըտենց մարդը: Կնշանակի՝ իմ տնից անե, ուրիշ կնիգ ունի՛:

Վեր ա կյալըմ, էդ հայլին վերցնում, վազ ա տալիս, կնըմ ա իրա մոր մոտ բողոքի:

—Ա՛յ մեր, —ասըմ ա, —տու ընձի տվել ես մարդու, իմ մարդըն ուրիշ կնիգ ա պահել:

Ասըմ ա. —Ծնչո՞վ ես իմանըմ:

Ասըմ ա. —Մե իշկա, ա՛յ:

Էդ կնիգն էլ առնըմ ա, մտիկ ա տալիս՝ իրա պատկերն ա մեջը:

—Ա՛, —ասըմ ա, —այ ախմա՛խ: Էդ քյաֆթառին կնացել ա սիրացե՞լ: Էդ ինչ գեշ կնիգ ա:

—Բա ի՞նչ անենք:

Ասըմ ա. —Սպասի: Մեր իմաստուն մարդը մեր տերտերն ա, տերտերին ասենք:

Տանըմ ա տերտերին, Տերտերն էլ մտիկ ա տալիս՝ մե տեր-
տեր միշին տուս ա կյալիս:

Ասըմ ա.—Պա՛, էղ իւր օղորմած հերն ա էլել, է՛: Տես, է՛,
միրուքով, պանով: Էն էլ ա տերտեր էլել: Ասըմ ա.—Այ օրթնված,
էստեղ ուրիշ պան չկա, էղ իւր հոր նկարն ա էլել, տուք չեթ իմա-
ցել:

Տերտերը վերցնում ա հայելին, էլ չի տալիս:

Ասըմ ա.—Ոչինչ չկա, թողեթ, կնացեք: Էս իմ հոր պատկերն
առ:

Մեր ու ախշիկ թողնում են, կյալիս:

Կինն էլ էղ մարդուց չի բաժանվել:

Էն ժամանակ ինչդար մութ ա էլել աշխարքը, է՛:

